

Որոշակի բույսերի, բուսական ծագում ունեցող արտադրատեսակների կամ 2000/29/ԵՀ Խորհրդի հրահանգի 5-րդ հավելվածի Բ մասում թվարկված՝ այլ արտադրանքների նկատմամբ բույսերի առողջության հետ կապված ստուգումների քանակը կրճատելու եղանակների ու աստիճանի վերաբերյալ չափորոշիչներ եւ պահանջվող վկայության համար մանրամասն պայմաններ հասկորոշող՝ Հանձնաժողովի 2004 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 1756/2004 (ԵՀ) կանոնակարգ

Պաշտոնական տեղեկագիր, L 313, 12.10.2004թ., էջ 0006 - 0009

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» համաձայնագիրը,

հաշվի առնելով Համայնքում բույսերի կամ բուսական ծագում ունեցող արտադրատեսակների համար վնասակար օրգանիզմների ներմուծման կամ դրանց տարածման¹ դեմ պաշտպանիչ միջոցների մասին Խորհրդի՝ 2000 թվականի մայիսի 8-ի 2000/29/ԵՀ հրահանգը եւ, մասնավորապես, դրա 13ա(5)(գ) հոդվածը,

Քանի որ

1) 2000/29/ԵՀ հրահանգով բույսերի, բուսական ծագում ունեցող արտադրատեսակների կամ այդ Հրահանգի 5-րդ հավելվածի Բ բաժնում թվարկված այլ արտադրանքի նկատմամբ սկզբունքորեն պետք է իրականացվեն նույնականացման եւ բույսերի առողջության հետ կապված ստուգումներ՝ նախքան դրանց ներմուծումը Համայնքի տարածք թույլատրելը,

2) նվազեցված հաճախականությամբ ստուգումների իրականացումը թույլատրելու համար անհրաժեշտ է մանրամասն դրույթներ նախատեսել, որոնք 2000/29/ԵՀ հրահանգի 13ա(2) հոդվածի երկրորդ ենթապարբերության համաձայն կվկայեն, որ Համայնք ներմուծված բույսերը, բուսական ծագում

¹ ՊՏ թիվ L 169, 10.07.2000թ., էջ 1: Հրահանգը վերջին անգամ փոփոխվել է Հանձնաժողովի 2004/70/ԵՀ հրահանգով (ՊՏ L 127, 29.04.2004թ., էջ 97):

ունեցող արտադրատեսակները կամ 5-րդ հավելվածի Բ բաժնում թվարկված այլ արտադրանք համապատասխանում են սույն Հրահանգով սահմանված պայմաններին,

3) քանի որ տնկման համար նախատեսված բույսերը, բուսական ծագում ունեցող արտադրատեսակները կամ այլ արտադրանք, որոնց համար ձեռնարկվում են 2000/29/ԵՀ հրահանգի 16(3) հոդվածի համաձայն ընդունված միջոցները, պարունակում են բարձր ռիսկ բույսերի կամ բուսական ծագում ունեցող արտադրատեսակների վրա վնասակար օրգանիզմների տարածման առումով՝ ստուգումների հաճախականության կրճատումը դրանց վրա չպետք է տարածվի,

4) հատուկ պայմաններ են սահմանվում այն բույսերի, բուսական ծագում ունեցող արտադրատեսակների կամ այլ արտադրանքի համար, որոնց ներմուծումը Համայնք պետք է թույլատրվի շեղումով՝ համաձայն 2000/29/ԵՀ հրահանգի 15(1) հոդվածի դրույթների: Հետեւաբար, նշված բույսերի, բուսական ծագում ունեցող արտադրատեսակների կամ այլ արտադրանքի նկատմամբ բույսերի առողջության հետ կապված՝ նվազեցված հաճախականությամբ ստուգումներ չպետք է իրականացվեն,

5) սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական հանձնաժողովի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Սույն Կանոնակարգով կարգավորվում են մի որոշակի երկրի, տարածաշրջանի կամ դրա մի մասի ծագում ունեցող բույսերի, բուսական ծագում ունեցող արտադրատեսակների կամ 5-րդ հավելվածի Բ բաժնում թվարկված այլ արտադրանքի նկատմամբ (այսուհետ՝ տվյալ արտադրանք) բույսերի առողջության հետ կապված՝ իրականացվող ստուգումները, որոնք նախատեսված են 2000/29/ԵՀ հրահանգի 13ա(1)(բ)(iii) հոդվածով՝ բացառությամբ.

ա) տնկման համար նախատեսված բույսերի,

բ) ցանկացած բույսի, բուսական ծագում ունեցող արտադրատեսակների կամ այլ արտադրանքի, որոնց ներմուծումը Համայնք պետք է թույլատրվի՝ համաձայն 2000/29/ԵՀ Հրահանգի 15(1) հոդվածի դրույթների,

գ) ցանկացած բույսի, բուսական ծագում ունեցող արտադրատեսակների կամ այլ արտադրանքի, որոնց նկատմամբ, համաձայն 2000/29/ԵՀ հրահանգի 16(3) հոդվածի, պետք է ձեռնարկվեն ստուգման ժամանակավոր միջոցներ,

դ) ցանկացած բույսի, բուսական ծագում ունեցող արտադրատեսակների կամ այլ արտադրանքի, որոնք նշված են 2000/29/ԵՀ հրահանգի 13ա(5)(բ) հոդվածի համաձայն կազմված ցանկում:

Հոդված 2

1. Ցանկացած անդամ պետություն կարող է դիմել Հանձնաժողով՝ տվյալ արտադրանքը նվազեցված հաճախականությամբ բույսերի առողջության հետ կապված ստուգումների ենթարկելու համար: Դիմումի մեջ պետք է ընդգրկվեն I հավելվածում սահմանված տեղեկությունները:

2. Պահպանելով 3-րդ հոդվածի պայմանները եւ կիրառելով 4-րդ հոդվածի չափորոշիչները՝ Հանձնաժողովը կազմում է այն արտադրատեսակների ցանկը, որոնց համար նվազեցված հաճախականությամբ ստուգումներ պետք է իրականացվեն եւ որոշում է նվազեցված հաճախականության աստիճանը:

3. 2000/29/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածում նշված կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո Հանձնաժողովը հրապարակում է այս ցանկը:

Հոդված 3

Տվյալ արտադրանքը կարող է ենթարկվել նվազեցված հաճախականությամբ ստուգումների՝ պայմանով, որ.

ա) երեք տարվա ընթացքում տվյալ արտադրանքի Համայնք ներմուծված բեռնաքանակը յուրաքանչյուր տարվա կտրվածքով լինի առնվազն 200, եւ

բ) տվյալ արտադրանքի բեռների նվազագույն քանակը, որոնց համար նախորդ երեք տարվա ընթացքում տեսչական ստուգումներ են իրականացվել, լինի առնվազն 600, եւ

գ) տվյալ արտադրանքի բեռնաքանակը, որը, պարզվել է, որ վարակված է եղել I-ին հավելվածի (ե) կետում նշված վնասակար օրգանիզմներով, յուրաքանչյուր տարի չգերազանցի տվյալ արտադրանքի՝ Համայնք ներմուծված բեռների ընդհանուր քանակի 1 %-ը, եւ

դ) տվյալ արտադրանքի համար դիմումը, 2(1) հոդվածում նշվածի համաձայն, տրամադրված լինի Հանձնաժողովին:

Հոդված 4

1. 2(2) հոդվածով նշված նվազեցված հաճախականության աստիճանը պետք է հիմնված լինի հետեւյալ չափորոշիչների վրա՝

ա) տվյալ արտադրանքի այն բեռնաքանակը, որը ճանապարհից առգրավվել է՝ դրանում I հավելվածի (ե) կետի ցանկում ընդգրկված վնասակար օրգանիզմների առկայության պատճառով,

բ) I հավելվածի (ե) կետի ցանկում ընդգրկված վնասակար օրգանիզմների մոտավոր շարժունակությունը ամենաշարժուն փուլում, երբ օրգանիզմը կարող էր տարածվել տվյալ բույսի կամ բուսական ծագում ունեցող արտադրանքի վրա,

գ) տվյալ արտադրատեսակների այն բեռնաքանակը, որի նկատմամբ բույսերի առողջության հետ կապված՝ փաստացի տեսչական ստուգումներ են իրականացվել,

դ) ցանկացած այլ գործոն, որը վերաբերում է տվյալ առետրի հետ կապված բուսասանիտարական ռիսկի նկատառումներին:

2. Նվազեցված հաճախականության տեսակն արտահայտվում է բույսերի առողջության հետ կապված՝ այն ստուգումների նվազագույն տոկոսով, որոնք կարող են իրականացվել անդամ պետությունների կողմից տվյալ արտադրատեսակների նկատմամբ: Այս նվազագույն տոկոսը յուրաքանչյուր

անդամ պետության համար կիրառվում է իր տարածք ներմուծված՝ նշված արտադրատեսակներից բաղկացած բոլոր բեռների նկատմամբ:

Հոդված 5

1. Չսահմանափակելով 2000/29/ԵՀ հրահանգի 16(1) հոդվածը՝ սույն Կանոնակարգի համաձայն, բույսերի առողջության հետ կապված՝ ստուգումների ենթարկվող արտադրատեսակների ներմուծումը դիտանցելու նպատակով, ներմուծող անդամ պետություններն ամենաուշը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին են տրամադրում II հավելվածում թվարկված տեղեկությունները:

2. Այս տեղեկատվության հիման վրա եւ 3-րդ ու 4-րդ հոդվածների դրույթներին համապատասխան, Հանձնաժողովը կազմում է հաշվետվություն եւ գնահատում տվյալ արտադրատեսակների նկատմամբ սույն Կանոնակարգի համաձայն նվազեցված ստուգումների իրականացման անհրաժեշտությունն ու դրանց հաճախականությունը:

3. Եթե պարզվել է, որ սույն Կանոնակարգի համաձայն նվազեցված հաճախականությամբ ստուգումների ենթակա տվյալ արտադրանքից բաղկացած ներմուծված բեռների ընդհանուր քանակի 1 %-ը վարակված է 2000/29/ԵՀ հրահանգի I կամ II հավելվածներում թվարկված օրգանիզմներից որեւէ մեկով, ապա տվյալ արտադրանքն այլեւս չի համարվի նվազեցված հաճախականությամբ բույսերի առողջության հետ կապված ստուգումներին հավակնող արտադրանք:

Հոդված 6

Եթե, 5(2) հոդվածում նշված գնահատման կամ 5(3) հոդվածում նշված կարծիքի հիման վրա պարզվում է, որ տվյալ արտադրանքն այլեւս չի բավարարում 3-րդ հոդվածի դրույթները, կամ եթե դա երեւում է անդամ պետությունների կողմից կատարված բեռների առգրավումների վերաբերյալ առավել թարմ ծանուցումներից, Հանձնաժողովը փոփոխում է նվազեցված

հաճախականությամբ բույսերի առողջության հետ կապված՝ ստուգումների ենթակա արտադրատեսակների ցանկը եւ հրապարակում այդ փոփոխությունը:

Հոդված 7

Սույն Որոշումն անհրաժեշտ է վերանայել ամենաուշը մինչեւ 2007 թվականի հունվարի 1-ը:

Հոդված 8

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող քսաներորդ օրը:

Կիրառելի է 2005 թվականի հունվարի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում, 2004 թվականի հոկտեմբերի 11-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Դեյվիդ Բայրն

Հանձնաժողովի անդամ:

ՀԱՎԵԼՎԱԾ I

2-րդ հավելվածում նշված տեղեկատվությունը ներառում է.

ա) տվյալ արտադրատեսակների նկարագրությունը.

բ) տվյալ արտադրատեսակների ծագումը,

գ) այն անդամ պետությունների ցանկը, որոնք ներմուծում են տվյալ արտադրատեսակները,

դ) Համայնքում տվյալ արտադրատեսակների ներմուծման ծավալը, որն արտահայտվում է բեռների քանակով, քաշով, կտորներով կամ միավորներով,

ե) 2000/29/ԵՀ հրահանգի I կամ II հավելվածում նշված վնասակար օրգանիզմների ցանկը, որոնք պատասխանատու են տվյալ արտադրանքի վրա հիվանդության տարածման համար,

զ) (ե) կետում նշված վնասակար օրգանիզմների առկայության պատճառով առգրավման ենթարկված նշված արտադրանքի բեռնաքանակը,

է) (ե) կետում նշված վնասակար օրգանիզմների մոտավոր շարժունակությունը ամենաշարժուն փուլում, որի ժամանակ օրգանիզմը կարող էր տարածվել տվյալ բույսի կամ բուսական ծագում ունեցող արտադրանքի վրա,

ը) (ե) կետում նշված վնասակար օրգանիզմների առկայությունից բացի՝ այլ պատճառներով տվյալ արտադրանքի առգրավված բեռնաքանակը,

թ) տվյալ արտադրանքի այն բեռնաքանակը, որի նկատմամբ բույսերի առողջության հետ կապված՝ փաստացի տեսչական ստուգումներ են իրականացվել:

Դրայեն (դ), (զ), (ը) եւ (թ) կետերում նշված տեղեկությունների առնչությամբ պարունակում է այդ տեղեկատվության տրամադրման տարվան նախորդող առնվազն երեք տարվան վերաբերող տվյալներ:

ՀԱՎԵԼՎԱԾ II

5(1) հոդվածում նշված տեղեկատվությունը յուրաքանչյուր արտադրատեսակի համար ներառում է.

ա) ներմուծված բեռների ընդհանուր քանակը,

բ) տեսչական ստուգում անցած բեռների ընդհանուր քանակը,

գ) 2000/29/ԵՀ հրահանգի I կամ II հավելվածներում թվարկված եւ սույն Հրահանգի համաձայն բեռների ներմուծման հետ կապված՝ վնասակար օրգանիզմների ընդհանուր քանակը եւ առգրավումների մանրամասները,

դ) (գ) կետում նշված վնասակար օրգանիզմների առկայությունից բացի այլ պատճառներով առգրավված բեռների ընդհանուր քանակը եւ դրա մանրամասները: